

ՎԱՐԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Վարկատեսակի անվանումը	<<ԷՆԵՐԳԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ>>
Վարկի նպատակը	Բնակելի տան կամ բնակարանի էներգաարդյունավետ ընթացիկ նորոգման և ներքին հարդարման աշխատանքների իրականացում, ՀՀ կառավարության 15.04.2022թ-ի թիվ N 520-Լ որոշմամբ հաստատված՝ Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում
Վարկի օգտագործման ուղղությունները	Վարկի գումարի ոչ պակաս, քան 20%-ը (բնակարանների դեպքում) և ոչ պակաս քան 30%-ը (բնակելի տների դեպքում) պետք է ուղղվի էներգաարդյունավետության բարձրացման ուղղված միջոցառումներին (էներգաարդյունավետության չափանիշները սահմանվում են ՀՀ կառավարության 26.05.2022թ-ի N 775-Լ որոշմամբ հաստատված Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագրի իրականացման կարգով (այսուհետ՝ Կարգ): Վարկի գումարի ոչ ավել, քան 10%-ը կարող է ուղղվել կենցաղային տեխնիկայի (առնվազն էներգախնայողության A+ դասի) ձեռք բերմանը:
Վարկի օգտագործման ձևը և հիմնավորումները	Վարկի գումարի ծախսումների առնվազն 70%-ը պետք է իրականացի անկանխիկ եղանակով: Ծախսումների առնվազն 80%-ը և էներգաարդյունավետ միջոցառումներին ուղղվող ծախսերի 100%-ը պետք է հիմնավորվեն վճարումը հավաստող փաստաթղթերով:
Պայմանները սահմանող մարմինը, որոշումը	<<ԲԼԵՍՍ>> ՈՒՎԿ ՍՊԸ Խորհրդի <<20>><<հուլիսի>>2022թ-ի թիվ 16 որոշում
Պայմանների գործողության ժամկետը	Սկսած <<25>><<հուլիսի>>2022թ-ից
Վարկի ձևակերպման վայրը	<<ԲԼԵՍՍ>> ՈՒՎԿ ՍՊԸ գլխամասային գրասենյակ, ՀՀ մասնաճյուղեր
Վարկի արժույթը	ՀՀ դրամ
Վարկի տրամադրման ձևը	Անկանխիկ (միանվագ կամ փուլային)
Վարկի նվազագույն գումարը	2.000.000 ՀՀ դրամ
Վարկի առավելագույն գումարը	10.000.000 ՀՀ դրամ, Ծրագրով հաստատված սահմանաչափերի համաձայն
Վարկի առավելագույն ժամկետը	7 տարի
Վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը	14% Վերը նշված տոկոսադրույքով հաշվարկված տոկոսագումարները ամբողջությամբ կամ մասնակի սուբսիդավորվում են պետական աջակցությամբ, Ծրագրով սահմանված չափերով (9-14%-ը):
Վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքի միջակայքը	0-5.11%
Վարկի ծառայության վճարներ	Չի սահմանվում
Վարկի և տոկոսագումարների վճարման եղանակը	Վարկի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ գումարով (անուիտետային)
Վարկի մարման դադարի շրջանը	Չի սահմանվում
Տոկոսագումարների հաշվարկման կարգը	Տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ՝ օրական կտրվածքով, տարվա օրացուցային օրերի քանակով
Անվանական տոկոսադրույքի փոփոխությունը	Վարկի անվանական տոկոսադրույքը պայմանագրի գործողության ընթացքում մնում է անփոփոխ՝ հաստատուն
Ժամկետանց վարկի տոկոսադրույքը	տարեկան 24%
Ժամկետանց տոկոսագումարի տույժը	օրական 0,13%
Պարտքի գանձման հերթականությունը	Տույժեր, տոկոսագումարներ, վարկի մայր գումար
Վարկի վաղաժամկետ մարումը	Վարկի վաղաժամկետ մարումը թույլատրվում է, տույժեր և տուգանքներ չեն

	սահմանվում: <i>Վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում են վարկառուի վարկավորման ընդհանուր ծախսի մեջ մտնող Ընկերության եկամուտը ձևավորող վճարները: Վարկի վաղաժամկետ մարման դեպքում վարկառուի ընտրությամբ՝ ա/վաղաժամկետ մարված գումարին համամասնորեն նվազեցվում է ամսական վճարումների չափը՝ թողնելով վարկի մարման ժամկետն անփոփոխ, կամ բ/նվազեցվում է վարկի մարման ժամկետը՝ ամսական վճարումների չափը թողնելով անփոփոխ:</i>
--	--

ՎԱՐԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Վարկի ապահովման միջոցները	Գրավ՝ անշարժ կամ շարժական գույք, որն Ընկերության համար ունի բավարար լիկվիդայնության /իրացվելիության/ աստիճան. Գրավի առարկա կարող է հանդիսանալ ինչպես վարկի գումարով վերանորոգվող, այնպես էլ այլ անշարժ գույք, վարկի գումարով ձեռք բերվող շարժական գույք կամ այլ գույք:
Վարկի գումար/գրավի գրավադրման արժեք առավելագույն հարաբերակցությունը	70%- անշարժ գույքի դեպքում 50%- այլ գույքի դեպքում
Գրավադրման հետ կապված ծախսերը	Գրավ դրվող գույքը ենթակա է գնահատման, անշարժ գույքի գրավի պայմանագիրը՝ նոտարական վավերացման և պետական գրանցման: Շարժական գույքի գրավադրման դեպքում գույքը ենթակա է պետական գրանցման, իսկ կողմերից մեկի պահանջի դեպքում՝ նոտարական վավերացման և ապահովագրման: Գրավադրման հետ կապված անհրաժեշտ բոլոր ծախսերը՝ գույքի գնահատման, նոտարական վավերացման և պետական գրանցման, կատարվում են հաճախորդի կողմից:

ՊԱՀԱՆՋՆԵՐ

Հաճախորդի տարիքային սահմանափակումները	Վարկառուի նվազագույն տարիք - 22 տարեկան Վարկառուի, Գրավատուի առավելագույն տարիք /վարկի մարման վերջնաժամկետի դրությամբ/ - 63 տարեկան
Երաշխավորի պահանջը	Վարկային հայտի առանձնահատկություններից ելնելով, որոշ դեպքերում կարող են պահանջվել երաշխավորներ և համավարկառուներ
Ապահովագրության պահանջը	Չի պահանջվում

ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Վարկի տրամադրման դրական գործոնները	- ներկայացված հայտը համապատասխանում է Ընկերության և Ծրագրով սահմանված պայմաններին ու պահանջներին, - վարկառուի վարկունակության վերլուծության դրական արդյունքը, - Ընկերության համար ընդունելի է հաճախորդի վարկային պատմությունն ու վարկային ծանրաբեռնվածությունը, - Ընկերության համար ընդունելի է վարկի ապահովման միջոցը
Վարկի մերժման գործոնները	- ներկայացված հայտը չի համապատասխանում սահմանված պահանջներին - վարկառուի վարկունակության վերլուծության բացասական արդյունքը - հաճախորդի բացասական վարկային պատմությունը - հաճախորդը, Ընկերության կարծիքով, խիստ ծանրաբեռնված է վարկային և այլ անձանց նկատմամբ պարտավորություններով - Ընկերության համար ընդունելի չէ վարկի ապահովման միջոցը - վարկի իրական շահառուն այլ անձ է - հաճախորդը Ծրագրի շրջանակներում ունի այլ ֆինանսական կառույցից ներգրավված վարկ
Որոշում ընդունելու և վարկը տրամադրելու ժամկետներ	Վարկի տրման (մերժման) որոշման կայացման ժամկետ - 2 աշխատանքային օր /պահանջվող ամբողջ փաստաթղթերը ներկայացնելուց հետո/ Որոշման մասին Հաճախորդին տեղեկացնելու ժամկետ - 1 աշխատանքային օր /որոշման կայացումից հետո/ Վարկը տրամադրելու ժամկետ - 5 աշխատանքային օր /հաճախորդի կողմից վարկի պայմաններին համաձայնելուց հետո/
Հաճախորդի հետ հաղորդակցման կարգը	Հաճախորդի ընտրությամբ՝ էլ.փոստով, փոստով, Ընկերության գրասենյակում <i>էլեկտրոնային եղանակով հաղորդակցումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է հաճախորդին 24/7 ռեժիմով, զերծ է թողնելով տեղեկատվության կորստի ռիսկից և</i>

	ապահովում է գաղտնիություն:
Վարկի քաղվածքների տրամադրման կարգն ու ժամկետները	Վարկի քաղվածքները տրամադրվում են անվճար, մեկամսյա պարբերականությամբ, հաճախորդի նախընտրած եղանակով
Ընկերությունը պարտավոր է 7 օր առաջ տրամադրել Ձեզ վարկի առաջարկը, ընծեռելով Ձեզ 7 օր մտածելու ժամանակ:	

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Անհրաժեշտ փաստաթղթերը	<ul style="list-style-type: none"> - Հաճախորդի և իր ընտանիքի անդամների անձնագիր և ՀԾՀ կամ նույնականացման քարտ, ամուսնական կարգավիճակը հիմնավորող փաստաթուղթ, - Վերանորոգվող գույքի սեփականության վկայական և լուսանկարներ, - մինչև 2010թ-ը կառուցված գույքի դեպքում՝ լիցենզավորված անձանց կողմից տրված եզրակացություն (ոչ ավելի, քան 10 տարվա վաղեմության)՝ 4-րդ աստիճանի վնասվածություն չունենալու վերաբերյալ, - Հաճախորդի եկամուտը հիմնավորող փաստաթղթեր, - Հաճախորդի և իր ընտանիքի անդամների վարկային պատմությունը նկարագրող փաստաթղթեր, - Վերանորոգման աշխատանքների նախահաշիվ, ներառյալ աշխատանքների իրականացման ժամկետները, - Վարկի օգտագործումը հիմնավորող փաստաթղթեր, - Գրավադրման համար անհրաժեշտ փաստաթղթեր, - Վարկի գծով երաշխավորի և/կամ համավարկառուի առկայության դեպքում՝ համավարկառու կամ երաշխավոր հանդիսացող անձի հետ կապված փաստաթղթեր:
Ներկայացման կարգն ու ժամկետները	Վարկային հայտի ներկայացման հետ միաժամանակ
Այլ փաստաթղթեր	Ընկերությունը կարող է իր ներքին իրավական ակտերով և/կամ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հաճախորդից պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ բանավոր տեղեկություններ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՆԵՐՔԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Վարկավորման որոշում ընդունող մարմինները	Գլխամասային գրասենյակ ներկայացված հայտի դեպքում՝ Գլխավոր տնօրեն - մինչև 5.000.000 ՀՀ դրամ գումարով վարկերի դեպքում Վարչություն - 5.000.000 ՀՀ դրամ գումարից ավել վարկերի դեպքում Մասնաճյուղեր ներկայացված հայտի դեպքում - Վարչություն
Հաճախորդի ընտանիքի յուրաքանչյուր անդամին բաժին ընկնող ամսական ծախսը	50.000 ՀՀ դրամ
ԱՅԼ	Հաճախորդի ցանկությամբ, կարող է կնքվել վարկային գործառնությունների իրականացման գլխավոր պայմանագիր, մինչև 12 տարի գործողության ժամկետով: Նշված պայմանագրի շրջանակներում հաճախորդին կարող են տրամադրվել նաև վարկեր՝ Ընկերության այլ վարկատեսակներով:

ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ԿԱՐՈՂ ԵՔ ԾԱՆՈԹԱՆԱԼ «ԲԼԵՍՍ» ՈՒՎԿ ՍՊԸ ԳԼԽԱՄԱՍԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ ԿԱՄ ԶԱՆԳԱՀԱՐԵԼՈՎ (010) 22-52-52 ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐՈՎ ԿԱՄ ՀԱՐՑԵՐ ՀԴԵԼՈՎ INFO@BLESS.AM ՀԱՍՑԵՆՎ: